



Հետազոտական աշխատանք

Խումբ՝ լեզուներ

Թեմա՝ Ֆրանսերենով դիալոգները որպես սեփական մտքերի արտահայտման և փոխանակման արդյունավետ միջոց

Հետազոտող՝ Լուսինե Հովհաննիսյան

Երևանի Ա. Մարգարյանի անվան 29 ավագ դպրոցի ուսուցչուհի

Դեկավար՝ Արաքս Մանուչարյան

Երևան 2022

Տիտղոսաթերթ

| | |
|---|---|
| <p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս | <p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com</p> |
| <p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա | <p>Ֆրանսերենով դիալոգները որպես սեփական մտքերի արտահայտման և փոխանակման արդյունավետ միջոց</p> |
| | |

| | |
|--|---|
| <p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Ա.Ա.Յ. • Մասնագիտություն • Ջեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ | <p>Հովհաննիսյան Լուսինե Բորիսի</p> <p>Մանկավարժ</p> <p>Ֆրանսերեն 10-11-րդ</p> |
| <p>37 Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Ջեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե | <p>Ա. Մարգարյանի անվ. 29 ավագ դպրոց, Սարյան 23</p> <p>+374 10 58 32 70 yerevanschool29@mail.ru school-29.weebly.com</p> |

Բովանդակություն

| | |
|---|----|
| Ներածություն | |
| | 3 |
| Գլուխ 1 | |
| Հաղորդակցման դերն ու | |
| նշանակությունը | 5 |
| Գլուխ 2 | |
| Օտար լեզվի դասավանդման | |
| մեթոդներ | 8 |
| 2.1 Բնական | |
| մեթոդներ | |
| | 9 |
| 2.2 Հաղորդակցական ուսուցման մեթոդի առաջացման | |
| պատմություն | 10 |
| 2.3 Հաղորդակցական մեթոդի դերն ու | |
| նշանակությունը | 13 |
| 2.4 Ֆրանսերենով դիալոգները որպես սեփական մտքերի | |
| արտահայտման և փոխանակման արդյունավետ միջոց ----- | |
| ----- | 14 |
| Եզրակացություն | |
| | 17 |
| Գրականության | |
| ցանկ | 18 |

Ներածություն

Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:

Թերևս մեծ մտածողը չէր սխալվում այն հարցում, որ պարտադրանքը, սեփական կարծիքի ու գաղափարի հարկադրումը որևէ դրական արդյունք չի ունենալու, մասնավորապես եթե խնդրո առարկան մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունն է: Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը սովորողին պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ՝ անհրաժեշտություն է առաջանում ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կարողունակությունների ձևավորման գործընթացը ևս: Կարողունակությունները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետգործունեության իրականացմանը: Ասվածից կարող ենք եզրահանգել, որ սովորողի մոտ ինքնուրույն գործելու, որոշումներկայացնելու, նախաձեռնողական վարք ձևավերելու համար առաջնային նախապայմաններ են հանդիսանում ուսումնականգործընթացի ժամանակ հնարավորություններ ստեղծել, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան ճիշտ և գրագետհաղորդակցվելու, որոշում կայացնելու, այս կամ այն խնդրի վերաբերյալ պատասխանատվության գիտակցում ձևավորելու, աստիճանաբար կայացման ու ձեռքբերումների հասնելու: Անշուշտ, այս ամենի համար առաջին հերթին կարևոր է, որ սովորողը ուսումնական գործընթացից կարողանա ստանա առավելագույնը և կարողանա գործել ինքնուրույն: Արդի կրթական բարեփոխումների շրջանում մեծապես կարևորվում է կրթության 4 առաջնային շահակիցների՝ սովորողների դերը դասի ընթացքի ժամանակ: Աշակերտակենտրոն ուսուցումը մեծապես վերարաձևակերպում է սովորողի մասնակցությունը բուն դասի ընթացքին՝ տալով նրան հետազոտելու, պրպտելու, սովորեցնելով սովորելու, նախագծելու, քննադատելու հնարավորություն: Ստացվում է, որ սովորողը, պասիվ դաշտից ակտիվ դաշտ գալով, դառնում է էլ ավելի ինքնուրույն, նախաձեռնող, փորձում է ստեղծագործաբար մտածել ու գործել՝ արդյունքում ամբարելով գիտելիքների, հմտությունների ու

կարողությունների կայուն պաշար: Այսպիսով, կարծում եմ, որ սովորողի համար կարմիր գծերը ջնջելով, նորագույն մեթոդներով հագեցած ու տեխնոլոգիապես հագեցած դասեր իրականացնելով՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է հասնել կրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին՝ խթանելով սովորողների ինքնուրույն գործելուն, նախաձեռնող ու նորարար լինելուն և ստեղծագործաբար գործելուն: Այս բոլոր ունակությունների զարգացման հիմքում ընկած է անձի կողմից ճիշտ և գրագետ հաղորդակցման , տարբեր օտար լեզուների տիրապետման առկայությունը: Լեզուն սովորելու լավագույն միջոցը խոսելն է:

3

Չեռագոտության թեմայի արդիականությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսուցիչի կողմից սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու և հաղորդակցվելու, ստեղծագործական մտածելու կարողությունների զարգացման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ունակությունները մերօրյա իրականության շարժիչ ուժն են հանդիսանում, և ժամանակակից աշխատողը բացի հիմնական գիտելիքներից և մասնագիտական հմտություններից պետք է կարողանա նաև մի քանի լեզվով հաղորդակցվել, որն էլ, բնականաբար, առաջ է բերում օտար լեզուներ սովորելու անհրաժեշտությանը:

Չայտնի ասացվածք կա՝ «Անգլերեն լեզուն ստեղծված է բիզնեսի, գերմաներենը՝ պատերազմի, իտալերենը՝ արվեստի, իսկ ֆրանսերենը՝ սիրո համար: » Իսկապես, Ֆրանսիան բոլորիս մոտ հաճախ ասոցիացվում է սիրո և ռոմանտիկայի հետ և նման նրբերանգ է ստացել նաև ֆրանսերեն լեզուն՝ շատերի համար այն շատ գրավիչ է հնչում: Այսօր ֆրանսերեն լեզուն լայնորեն կիրառվում է Եվրոպական շատ երկրներում և համարվում է պետական լեզու ոչ միայն Ֆրանսիայում, այլ նաև մի շարք այլ երկրներում, ինչպիսիք են Շվեյցարիան, Մոնակոն, Լյուքսեմբուրգը, Բելգիան, Կանադան, ինչպես նաև շատ աֆրիկյան երկրներում: Ֆրանսերենը հանդիսանում է ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից և շատ երկրներ, այն որպես

պարտադիր ուսուցանվող առարկա, ներառում են իրենց դպրոցական և բուհական կրթական ծրագրերում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆրանսերենի լավ իմացությունը հետագայում կօգնի իրենց քաղաքացիներին ավելի հեռանկարանային և բարձր վարձատրվող աշխատանք գտնել, հետևաբար հետազոտական աշխատանքի արդիականության հիմքում ընկած էֆրանսերեն լեզվի ուսումնառության գործընթացում առավելապես մեծ ուշադրություն դարձնել սովորողների հաղորդակցական տեխնիկային.այն զարգացնելու համար կիրառել տարբեր մեթոդներ և մոտեցումներ:

Այս հետազոտական աշխատանքում մենք կանդրադառնանք մասնավորապես դասապրոցեսում տարբեր թեմաների և բնագավառների վերաբերող դիալոգների կիրառմանը սովորող-սովորող, սովորողներ-ուսուցիչ, որն էլ կհանդիսանան սովորողների մոտ սեփական մտքերի արտահայտման և փոխանակման արդյունավետ միջոց::

| | |
|--|--|
| <p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p> | <p>Չետագոտության նպատակն է՝ շեշտադրել ֆրանսերեն լեզվի դասաժամին սովորողի ինքնուրույնությանը խթանելու եղանակներն ու մեթոդները, հաղորդակցական մոտեցման առանձնահատկությունները, և վեր հանել ու ներկայացնել դիալոգների միջոցով հաղորդակցման կազմակերպման արդյունավետությունը՝ համեմատելով այն լեզվի ուսուցման այլ մեթոդների հետ:</p> <p>Այս նպատակն իր հերթին պահանջում է լուծել հետևյալ խնդիրները. Չետագոտության խնդիրները</p> <ol style="list-style-type: none"> 1. Հիմնավորել ուսումնական գործընթացում սովորողի ինքնուրույն գործելու, որպես նախաձեռնող հանդես գալու կարևորությունը, ինչպես նաև ցույց տալ ուսուցչի կողմից ընտրված ուսուցման ձևերի ու մեթոդների դերը և արդյունքները ֆրանսերեն առարկայի դասաժամին: 2. Ուսումնասիրել ֆրանսերեն լեզվի դասավանդման տարբեր մեթոդներ: 3. Ուսումնասիրել որպես հաղորդակցման ձև՝ երկխոսություն /դիալոգ/ մեթոդի արդյունավետությունը 4. Չետագոտել հաղորդակցական և բնական այլ մեթոդների միջև եղած տարբերությունները: |
| | |
| <p>Թեմայի կարևորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար</p> | <p>Թեմայի կարևորությունը պայմանավորված է ուսուցիչի կողմից 10-11րդ դաս. սովորողների ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու և հաղորդակցվելու,</p> |

| | |
|---|---|
| | <p>ստեղծագործական մտածելու կարողունակությունների զարգացման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ունակությունները մերօրյա իրականության շարժիչ ուժն են հանդիսանում, և ժամանակակից աշխատողը բացի հիմնական գիտելիքներից և մասնագիտական հմտություններից պետք է կարողանա նաև մի քանի լեզվով հաղորդակցվել, որն էլ, բնականաբար, առաջ է բերում օտար լեզուներ սովորելու անհրաժեշտությանը:</p> |
| | |
| <p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p> | <p>ա) Լեզվական գրագիտություն և կարողունակություն</p> <p>բ) Սովորել սովորելու կարողունակություն</p> |
| | |
| <p>Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ուղորտին</p> | <p>Օրենսդրություն</p> |

Պարագրաֆներ/մասեր

Գլուխ 1 Հաղորդակցման դերն ու նշանակությունը ուսումնառության գործընթացում

Խոսքը` որպես հաղորդակցական միավոր
Հաղորդակցումը բարդ գործընթաց է, և պատահական չէ, որ այն ուսումնասիրության նյութ է դարձել սոցիոլոգների, փիլիսոփաների, հոգելեզվաբանների, ինչպես նաև հանրալեզվաբանությամբ զբաղվողների համար: Մասնագետներին

հետաքրքրում են խոսքի հաղորդումը և ընկալումը, խոսող-խոսակից հարաբերությունների ազդեցությունը խոսքի վրա, այն իրադրությունը, որում ձևավորվում է խոսքը, այն պատճառները, որոնք դժվարություններ են ստեղծում հաղորդակցման համար, այն պայմանները, որոնք նպաստում են հաղորդակցման արդյունավետությունը բարձրացնելուն: Գրագետ հաղորդակցման համար անհրաժեշտ է տիրապետել հաղորդակցման իրավիճակի բաղադրատարրերին:

Դրանք են՝

- 1) տեղեկույթի հաղորդողը և ընդունողը (ո՞վ - ո՞ւմ)
- 2) շփման բնույթը (պաշտոնական, ընկերական, մտերմական, չեզոք)
- 3) խոսքի առարկան-թեման
- 4) նպատակը
- 5) շփման կողմ՝ գրական լեզու, բարբառ, երկլեզվյան հաղորդակցում, արտալեզվական գործոններ
- 6) շփման եղանակները՝ գրավոր-բանավոր (գրավոր խոսքը ուղղված է մի դեպքում կոնկրետ մարդու՝ նամակ, SMS հաղորդագրություն, այլ դեպքում՝ ընթերցողին՝ գիրք, հոդված, մամուլ), տարածական (skype, Wi-Fi), լսողական, տեսալսողական (հեռախոսային խոսակցություն, հեռուստահաղորդումներ), ոչ խոսքային միջոցներ (ժեստեր, դիմախաղ),
- 7) հաղորդակցման պայմանները՝ ա) տեղը (քաղաք, գյուղ, աշխատավայր, ընտանիք և այլ վայրեր), բ) ժամանակը (առավոտյան, երեկոյան, ամառ, ձմեռ)
- 8) ազգային առանձնահատկություններ:
Հաղորդակցման ժամանակ խոսողը կատարում է մշտական հասարակական դեր՝ ամուսին, կին, ծնող, բժիշկ, դասախոս, վարորդ, իրավաբան, եղբայր, քույր ևն, և փոփոխական՝ իրադրային՝ հաճախորդ, հյուր, այցելու, հիվանդ, հանգստացող, զբոսաշրջիկ և այլն: Շփման մեջ մտնելով՝ խոսողը պետք է կողմնորոշվի խոսակցի հասարակական դերով: «Հասարակական յուրաքանչյուր դեր լեզվում առանձնահատուկ նշանակություն ունի»[3],- նշում է ռուս լեզվաբան Կրիսինը:

Բացի այս, հաղորդակցական իրավիճակում մեծ դեր ունի այն, թե հաղորդակցվողները հասարակական որ խմբին են

պատկանում: Հասարակական տարբեր խմբերի կողմից լեզվի գործածության ուսումնասիրությանը անդրադարձել է նաև Ա. Այտընյանը. «Ազգի մը մէջ խորհողն ու խոսողը մէկ անհատ մը չէ, եւ ոչ ամենքը միեւնոյն կարգի եւ վիճակի մարդիկ են... Կան Ազատաց լեզու, Ուսումնական կամ Գիտնոց լեզու, Հասարակ կամ Ընտանեկան լեզու, Գռեհիկ կամ Գեղջկաց լեզու եւ այլն»[1]: Այսինքն՝ մարդու հասարակական կարգավիճակը, հասարակական այս կամ այն խմբին պատկանելը անդրադառնում են լեզվական միջոցների գործածության վրա, առաջ բերում լեզվական որակների փոփոխություն:

Ժամանակակից լեզվաբանության ներկայացուցիչները, որոնք կարելի է անվանել հաղորդակցական լեզվաբանություն, կարծում են, որ ոչ բառարանը, ոչ քերականական ձևը, ոչ էլ լեզվի հնչյունական կազմը առանձին չեն կազմում որևէ հաղորդակցական միավոր: Որպես հաղորդակցության գործընթացի համար համապատասխան լեզվական տարրերը ինտեգրող նվազագույն միավոր, համարվում է խոսքի գործողություն, որում իրականացվում է հաղորդակցություն, որը սահմանվում է որպես համատեղ միջսուբյեկտիվ գործունեության ակտ՝ սոցիալական-խոսքի խնդիր լուծելու համար, որում փոխակերպվում են անհատական դրդապատճառները, նպատակները, արդյունքները և գնահատումները՝ վերածվելով նոր իրականության, ընդհանուր դրդապատճառների՝ փոխգործակցող գործողությունների թիրախային կայանքի:

Հաղորդակցական ուսուցման մեթոդի ներկայացուցիչ Է.Ի. Պասովը կարծում էր, որ հաղորդակցությունը բաղկացած է այն բանից, որ մեր ուսուցումը պետք է կազմակերպվի այնպես, որ իր հիմնական որակներով և առանձնահատկություններով նման լինի հաղորդակցության գործընթացին:

Հաշվի առնենք հետևյալ պայմանները.

1. Առաջինը՝ հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը: Մարդիկ միմյանցից տարբերվում են ինչպես իրենց բնական հատկություններով (ուղևակություններով), կրթական և խոսքի գործունեություն իրականացնելու կարողությամբ, այնպես էլ որպես անհատի իրենց բնութագրերով. Անձնական փորձ, գործունեության համատեքստ (յուրաքանչյուր աշակերտ ունի իր գործունեության մի ամբողջ շարք, որով զբաղվում է և որն էլ հիմք է հանդիսանում

մարդկանց միջև հարաբերություններ), որոշակի զգացմունքների և հույզերի ամբողջություն (մեկը հպարտության զգացում ունի իր քաղաքում, մյուսը՝ ոչ), նրա հետաքրքրությունները, իր կարգավիճակը (դիրքը) թիմում (դասարանում):

6

Հաղորդակցական ուսուցումը ենթադրում է աշակերտների այս բոլոր բնութագրերը հաշվի առնել, քանի որ միայն այս կերպ կարող են ստեղծվել հաղորդակցության պայմաններ. Հաղորդակցման շարժառիթ է առաջանում, խոսքի նպատակասլացություն է ապահովվում, հարաբերություններ են ստեղծվում և այլն:

2. Հաղորդակցությունը դրսևորվում է ուսումնառության խոսքի կողմնորոշման մեջ: Դա կայանում է նրանում, որ խոսելու գործնական տիրապետման ուղին՝ որպես հաղորդակցության միջոց, ընկած է լեզվի հենց գործնական օգտագործման միջոցով: Որքան զորավարժությունը հիշեցնում է իրական շփումը, այնքան ավելի օգտակար է այն: Ուստի լեզվական վարժություններ, ինչպիսիք են «գոյականները ճիշտ տեղադրել», « տրված բառերով կազմել նախադասություններ» և այլն պետք է համադրվեն այնպիսի առադրանքների հետ, որ աշակերտներն ունենան խոսքային առաջադրանքներ:

3. Հաղորդակցությունը դրսևորվում է վերապատրաստման \$ուսնցիոնալության մեջ: Այն ենթադրում է, որ և՛ բառերը, և՛ քերականական ձևերը յուրացվում են գործունեության մեջ անմիջապես՝ դրա իրականացման հիման վրա: Աշակերտը կատարում է ցանկացած խոսքային առաջադրանք, հաստատում է միտքը, կասկածում է լսածի վրա, հարցնում է ինչ-որ բանի մասին, խրախուսում է զրուցակցին գործողության և ընթացքի մեջ: Սա սովորում է անհրաժեշտ բառերը կամ քերականական ձևերը:

4. Հաղորդակցականությունը ենթադրում է իրավիճակային հաղորդակցություն: Սիտուացիոնալիզմը ցանկացած արտահայտության փոխկապակցումն է հաղորդակցողների հարաբերությունների հետ՝ նրանց գործունեության համատեքստով:

5. Հաղորդակցությունը նշանակում է ուսման գործընթացի անընդհատ նորարարություն, որը, ի վերջո, բացառում է

կամայական հիշողությունը (երկխոսություններ, հայտարարություններ, տեքստեր), ինչը մեծ վնաս է հասցնում հաղորդակցման ուսմանը և ապահովում է խոսելու արտադրողականությունը:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ հաղորդակցականությունն անհրաժեշտ է ուսուցման գործընթացում, քանի

որ այն նպաստում է, որ հաշվի առնվեն այնպիսի հանգամանքներ ինչպիսիք են յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը, ուսուցման գործընթացի խոսքի կողմնորոշման մեջ դրսևորումը, ուսուցման ֆունկցիոնալության դրսևորումը, իրավիճակային հաղորդակցություն, ուսման գործընթացի անընդհատ նորություն:

7

Գլուխ 2 . Օտար լեզվի դասավանդման տարբեր մեթոդներ

2.1 Բնական մեթոդներ

Նորարարական տեխնոլոգիաներով համալրված այս դարում օտար լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում արդի տեսաբաններին: Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն:

Մեթոդաբանական գրականության մեջ տարբերակվում են լեզվուսուցման երեք առանցքային մոտեցումներ՝

1. Կառուցվածքային (լեզուն դիտարկվում է որպես քերականական տարրերի կապակցման համակարգ),

2. գործառական (լեզուն դիտարկվում է որպես որոշակի գործառույթների արտահայտման և իրականացման գործիք)

3. ինտերակտիվ (լեզուն դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման միջոց):

Ելնելով լեզվի սուցման վերոհիշյալ մոտեցումներից՝ իսպանագիտական աղբյուրներում սովորաբար տարբերակում են երեք հիմնական մեթոդ՝

1. Քերականական
2. Հաղորդակցական
3. Հանրական

Ներկայումս ավելի մեծ հեղինակություն են վայելում նորարարական տեխնոլոգիաների հիման վրա ձևավորված համացանցային աղբյուրները, որոնք նույնպես օտար լեզուների ուսուցման արդյունավետ միջոց են:

Քերականական մեթոդը դասավանդման ավանդական մեթոդ է, որն ի հայտ է եկել 18-րդ դարի վերջերին և վերջնականապես ձևավորվել 20-րդ դարի սկզբներին՝ ստանալով քերականական թարգմանության մեթոդ անվանումը: Միացյալ

Նահանգներում այն հայտնի է նաև Պրուսյան մեթոդ անվամբ [7]:

Երկար ժամանակ այն միակ ընդունելի մեթոդն էր: Այս ավանդական մեթոդի հիմքում միայն տեքստերի ընթերցումն ու

թարգմանությունն են՝ շեշտը դնելով բառուսուցման, ուղղագրության և քերականության վրա՝ առանց գործնական

կիրառության: Ներկայումս այն ձևափոխվել է և վերանվանվել

բառաքերականական մեթոդ, որն արդեն հիմնվում է

կարդալու, լսելու և բանավոր ու գրավոր խոսքի վրա: Այն կիրառվում է ժամանակակից լեզվաբանական տարբեր

դպրոցներում:

8

Հանրական մեթոդը եկավ լրացնելու և համադրելու քերականական և հաղորդակցական մեթոդները՝ հանդես գալով որպես

դրանց ավելի ամբողջական ու կատարյալ տեսակ: Քանի որ և՛

բանավոր, և՛ գրավոր խոսքը հավասարապես կարևոր են

լեզուն կատարյալ տիրապետելու համար, հանրական մեթոդը լեզվի ուսուցումը հավասարապես բաշխեց այդ երկուսի միջև:

Այն խթանում է դասախոսի և ուսանողի փոխհամագործակցությունը լսարանում, օտար լեզվի ուսուցումը համարում է

կոլեկտիվ ձեռքբերում՝ հիմնված ոչ թե մրցակցության, այլ

համագործակցության վրա: Չարգացնում է ստեղծագործական

միտքը և այլ անձանց հետ հաղորդակցվելու ունակությունները:

Դասընթացի ընթացքում քննվում են քերականությունը,

բառապաշարը և հնչյունաբանությունը: Տվյալ լեզվի մշակույթը

նույնպես խորագնին քննության է առնվում: Դասախոսը

ուսուցման գործընթացում պետք է լսի, հասկանա և աջակցի

ուսանողին, կազմի առաջադրանքներ, իսկ ուսանողի դերն

ակտիվորեն մասնակցելն է, դասընթացի մյուս անդամներին

ներգրավելն ու միմյանց օգնելը, որն ինքնին խթանող գործընթաց

է:

Հաղորդակցման մեթոդին կանդրադառնանք մեր հետագա դիտարկումներում:

Օտար լեզվի դասավանդման մեթոդների շարքում, ըստ արդյունավետության, կարելի է առանձնացնել նաև հետևյալ երեք մեթոդները`

ա) Ուղղակի մեթոդ

բ) Հաջորդականության մեթոդ

գ) Ֆիզիկական արձագանքման մեթոդ:

Նախքան տվյալ մեթոդներն ուսումնասիրելն անհրաժեշտ է փաստել, որ վերջիններս համալրում են բնական մեթոդների շարքը, որոնք գրեթե ամբողջությամբ հերքում են զուտ քերականական մեթոդն ու քերականական կանոնների մտապահումը:

Ըստ անգլիացի փիլիսոփա Ջ. Լոքի և իսպանացի լեզվաբան Ա. Սանչեսի` լեզուն պետք է սովորել բնական ճանապարհով, այն գործածելով` գրելով և կարդալով: Քերականության ուսուցումը դեռևս բավարար չէ լեզուն գործածելու համար և ոչ էլ լեզուն դարձնում է հասարակության անդամների հաղորդակցության միջոց: Սակայն տեղին է նշել, որ օտար լեզվի քերականությունը սովորելը համարվել է այդ լեզու սովորելու բնական մեթոդ կամ միջոց, որի դեպքում սկսնակները օտար լեզուն սովորել են, ինչպես երեխաները մայրենի լեզուն [8]:

9

Ուղղակի մեթոդը

Բնական մեթոդների շարքում ունի լայն տարածում: Այն ենթադրում է օտար լեզվի ուսուցում առանց մայրենի լեզվի

կիրառության, այսինքն` ուսումնական գործընթացը կազմակերպվում է բացառապես տվյալ օտար լեզվով: Այն ընդգծում է

թիրախային լեզվում ձևի և բովանդակության ուղղակի զուգորդումը, ըստ որի` մանկավարժները, բացի քերականական

կանոններ բացատրելուց, դասարանում պետք է խթանեն նաև օտար լեզվի ուղղակի և ինքնաբուխ կիրառությունը: Ուղղակի

մեթոդը հիմնվում է արտասանության, դիմախաղի և նկարների ու պատկերների ցուցադրման վրա` նոր բառեր սովորելու

նպատակով, որի հիմքում բնականաբար ընկած է բանավոր խոսքը:

Հաջորդականության մեթոդ

Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող

գործողություններն անընդհատ կրկնելով: Օր.` Ամեն առավոտ ես

արթնանում եմ ժամը 7-ին, լոգանք եմ ընդունում, հագնվում եմ, նախաճաշում եմ, սրճում եմ, գնում դպրոց, դասերից հետո ընկերներով հավաքվում ենք և այլն: Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով ավելի լավ յուրացման համար:

Ֆիզիկական արձագանքման մեթոդ

Ֆիզիկական արձագանքման մեթոդը հայտնի է նաև որպես շարժման մեթոդ, որի հիմնադիրն է Ջեյմս Աշերը:

Հոգեբանության մեջ ֆիզիկական արձագանքման մեթոդը հարաբերակցվում է հիշողության տեսության հետ, որում բանավոր խոսքը, որը կապված է որոշակի ֆիզիկական գործողության հետ, մեծացնում է մտապահելու հնարավորությունը: Աշերը

ներշնչված էր փիլիսոփայության մեջ հայտնի «հետքի» տեսությամբ, ըստ որի՝ մտապահումը նույնքան ուժգին է, որքան ուժգին և հաճախակի է այն հետքը, որը ինչ-որ կոնկրետ մտավոր զուգորդում թողնում է մեր ուղեղում: Ըստ Աշերի՝

մեծահասակները երկրորդ լեզուն պետք է սովորեն այնպես, ինչպես մանուկներն իրենց մայրենի լեզուն, այն է՝ երկար

ժամանակ լսելով՝ երեխաները մտապահում են հսկայածավալ բառապաշար, որը որոշ ժամանակ անց սկսում են կիրառել՝

դարձնելով հոդաբաշխ խոսք[6]: Նա հարում էր, այսպես կոչված,

«ընկալման մոտեցում» տեսությանը, ըստ որի՝ ընկալման

հմտությունները նախորդում են կիրառմանը, իսկ բանավոր խոսքի

ուսուցումը պետք է հետաձգվի այնքան ժամանակ, մինչև

ընկալման հմտությունները կատարելագործվեն:

10

Մեթոդաբանական գրականության մեջ շրջանառվում է նաև

«արագացված ուսուցում» եզրը: Այս մեթոդի հիմնադիրն է

բուլղարացի դասախոս Գեորգի Լոսանովը: Ըստ նրա՝ մարդու սովորելու

և մտապահելու ունակությունները գործնականում

անսահմանափակ են, քանի որ այդ դեպքում նա օգտվում է ուղեղի պահեստային միջոցներից [4]:

Լոսանովը փաստում է նաև, որ որպեսզի ուսանողն ուսուցման

ընթացքում ընկալի տվյալ համատեքստը, հաղորդակցման

գործառույթը (բարևել, ներկայանալ և այլն) ինքնին այնքան կարևոր չէ,

որքան ճիշտ միջոցների կիրառությունը:

Միջավայրը բացասական ազդեցություն չպետք է ունենա վերջինիս ընկալման վրա: Այդ իսկ պատճառով կարևոր են լսարանի զարդարանքը, գույքը և այլն, ինչպես նաև երաժշտության ճիշտ ընտրությունը (որպես ուսուցման պարտադիր բաղկացուցիչ մաս): Այս տեսությամբ Լոսանովը փորձում է ցույց տալ, թե ինչպես կարելի է ուսուցման գործընթացում գրավել մարդու ուշադրությունը՝ հասնելով լավագույն արդյունքների:

2.2 Հաղորդակցական ուսուցման մեթոդի առաջացման պատմությունը: Հաղորդակցական մեթոդը -(կամ մոտեցումը) սկիզբ է առել Բրիտանիայում 60-70-ականներին:

Այն ժամանակ տարածված ավանդական տեխնիկան (աուդիալեզու, քերականական թարգմանության տեխնիկա) այլևս չէր բավարարում օտար լեզու սովորողների մեծամասնության կարիքները: Իրականում, պատճառը ոչ այնքան հին մեթոդներն էին, որոնք զուտ ֆունկցիոնալ տեսակետ ունեին լեզվի՝ որպես հաղորդակցման գործիքների մասին: Եվ նրանց կարիքը ոչ թե ուսումնասիրվող լեզվի խորը, համակարգված յուրացումն էր, որին ուղղված էին ավանդական ակադեմիական ծրագրերը, այլ նրանց գիտելիքների անմիջական գործնական կիրառման հնարավորությունը:

Բայց պարզվեց, որ մարդիկ, ովքեր օտար լեզու են սովորել չեն կարողանում հաղորդակցվել դրանով, գաղափար չունեն խոսքի վարվելակարգի մասին, մի խոսքով, նրանք իրենց անօգնական են զգում իրական շփման իրավիճակում:

11

1960-ականներին Եվրոխորհուրդը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ՝ ուղղված մայրցամաքում օտար լեզուների ուսուցման ակտիվացման ծրագրի մշակմանը: 1971 թ.-ին փորձագետների մի խումբ հանձնարարվեց ուսումնասիրել մեծահասակ սովորողներին օտար լեզուների ուսուցման համակարգի ստեղծման հնարավորությունները: Սա ելակետ էր մի շարք ուսումնասիրությունների, որոնք ուղղված էին հայեցակարգի մշակմանը, որը կարող է կենտրոնանալ ուսանողակենտրոն ուսուցման համատեքստում օտար լեզվով հաղորդակցվելու կարողության ձևավորման և զարգացման

վրա: Արդյունքում, ձևավորվեց շեմի մակարդակները որպես օտար լեզու յուրացնելու հատուկ նպատակներ զարգացնելու գաղափարը: Այն, ինչ ի սկզբանե նախատեսված էր մեծահասակ սովորողների համար, հաջողությամբ հարմարեցվեց դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում կրթության նպատակներին և բովանդակությանը:

2.3 Հաղորդակցական մեթոդի դերն ու նշանակությունը
Օտար լեզուների հաղորդակցական ուսուցումը գործունեության բնույթ է կրում, քանի որ բանավոր շփումն իրականացվում է «խոսքի գործունեության» միջոցով, որն իր հերթին ծառայում է մարդկային արդյունավետ գործունեության խնդիրների լուծմանը հաղորդակցվող մարդկանց «սոցիալական փոխգործակցության» համատեքստում: Հաղորդակցության մասնակիցները փորձում են օտար լեզվի միջոցով լուծել համատեղ գործունեության իրական և մտացածին խնդիրները: Ֆրանսերեն լեզվի դասավանդման ներկա փուլում ուսուցիչների մեծ մասը համարում են, որ «հաղորդակցական»-ը առավել ասարդյունավետ է համեմատած ավանդական մեթոդների հետ, որոնք գործում են «քերականությունից բառապաշար և հետո անցում համախմբման վարժությունների» սկզբունքի: Արհեստականորեն ստեղծված վարժությունները լեզու օգտագործող չեն կազմում, և այն անձը, ով լեզու է սովորում այս հատուկ մեթոդով, ավելի շուտ լռում է, քան արտասանում է սխալ արտահայտություն: Իսկ «հաղորդակցականությունը», ընդհակառակը, նպատակ ունի լեզուն «լուծելու»: Այստեղից էլ առաջ եղավ մոտեցման մեկ այլ ձև` դիալոգը որպես հաղորդակցական մոտեցում, որը զարգացնում է լեզվի բոլոր հմտությունները` խոսելու և գրելու, կարդալու և լսելու ունակություններ: Քերականությունը յուրացվում է լեզվով հաղորդակցման գործընթացում. Աշակերտը նախ անգիր է անում բառերը, արտահայտությունները, լեզվական բանաձևերը և

12

հետո միայն սկսում է հասկանալ, թե դրանք որոնք են քերականական իմաստով: Նպատակը սովորողին սովորեցնել Ֆրանսերեն լեզվով խոսել ոչ միայն սահուն, այլև ճիշտ:

Նոր բառերի կանոնները, իմաստները ուսուցիչը բացատրում է աշակերտին ծանոթ բառապաշարի, քերականական կառուցվածքների և արտահայտությունների միջոցով՝ ժեստերի և դեմքի արտահայտությունների, գծագրերի և այլ տեսողական միջոցների միջոցով: Կարող են օգտագործվել նաև համակարգիչներ CD- ներով, ինտերնետով, հեռուստածրագրերով, թերթերով, ամսագրերով և այլն: Այս ամենը նպաստում է աշակերտների հետաքրքրության արթնացմանը ուսումնասիրված լեզվի երկրի պատմության, մշակույթի, ավանդույթների նկատմամբ:

Դասարանում ուսուցիչը ստանձնում է հաղորդակցության կազմակերպչի գործառույթները, առաջատար հարցեր է տալիս, ուշադրություն է հրավիրում մասնակիցների նախնական կարծիքների վրա, վիճահարույց հարցերի քննարկման ժամանակ գործում է որպես մրցավար:

Դրա կիրառումը, ըստ իսպանացի հայտնի մեթոդիստ Պ. Մելերո Աբադիանի, ընթանում է երեք փուլով, այն է՝ ինչ դասավանդել, ինչպես դասավանդել և ինչպես զարգացնել հաղորդակցական գործընթացները լսարանում [5]: Այս մեթոդը հիմնականում բնութագրվում է որպես ընդհանուր ուսուցման մոտեցում և ոչ թե որպես հստակ որոշված դասավանդման մեթոդ: Ավստրալիացի հայտնի լեզվաբան Դավիթ Նուևանը վերջինիս համար առանձնացրել է մի շարք ընդհանուր հատկանիշներ և սկզբունքներ՝ փաստելով, որ ուսանողը պիտի ակտիվորեն ներգրավվի ուսուցման գործընթացի մեջ՝ որպես ուսուցումը խթանող ակտիվ սուբյեկտ: Նա փաստում է, որ այս մեթոդի դեպքում ուսանողն ուշադրությունն ավելի շատ կենտրոնացնում է իմաստի, քան լեզվական կաղապարի վրա: Մեթոդը ենթադրում է օտար լեզվի ուսուցում՝ հիմնված ոչ թե զուտ քերականական կառույցների, այլ բանավոր խոսքի և հաղորդակցության վրա, որոնց շնորհիվ ուսանողը կտիրապետի նաև տվյալ քերականական կառույցներին: Սակայն ինչպես արդարացիորեն նշում է Հ. Բադդասարյանը, օտար լեզվի դասընթացը չի կարող հիմնվել բացառապես հաղորդակցական մեթոդի վրա, քանի որ այդ դեպքում հաշվի չեն առնվում հաղորդակցության համար անհրաժեշտ բոլոր լեզվական հմտությունները. հաղորդակցական ակտը գերազանցապես հիմնվում է խոսակցական լեզվի վրա՝ բավարար չափով հաշվի չառնելով սոցիալմշակութային համատեքստը և հաղորդակցության

2.4 Ֆրանսերենով դիալոգները որպես սեփական մտքերի արտահայտման և փոխանակման արդյունավետ միջոց

Ֆրանսերեն լեզվի դասերին ուսուցիչը ստեղծում է իրավիճակներ, երբ ուսանողները զույգերով շփվում են միմյանց հետ, հանձնարարվում է խմբային աշխատանքներ: Սա դասը ավելի բազմազան է դարձնում: Աշխատելով խմբում ` ուսանողները ցույց են տալիս խոսքի անկախություն: Նրանք կարող են օգնել միմյանց: Շփվում են անկաշկանդ, բառերի արտասանության ժամանակ ավելի ուշադիր և հստակ են արտահայտվում: Հաղորդակցման տարբերությունն այն է, որ ակտիվ բառապաշարին և ուսումնասիրված քերականությանը հատուկ հարմարեցված տեքստեր և երկխոսություններ փոխանակելու համար այն որպես հիմնական տեխնիկա օգտագործում է իրական կյանքի իրավիճակների իմիտացիա, որոնք խաղում են դասարանում, որպեսզի աշակերտները առավելագույնի հասցնեն խոսելու մոտիվացիան: Այսպիսով, դասագրքից բնորոշ արտահայտություններ անվերջ ծամելու փոխարեն. «Իմ անունը Իվան է: Ես ապրում եմ Մոսկվայում: Ես աշակերտ եմ »և այլն,« ծանոթություն »թեման ուսումնասիրող աշակերտներն իրականում սկսում են ակտիվորեն ծանոթանալ և քննարկել իրենց հետաքրքրող հարցեր: Ուսուցիչը հիմնականում քննարկման է ներկայացնում թեմաներ, որոնց աշակերտները լավ ծանոթ են իրենց մայրենի լեզվով. Սա հնարավորություն է տալիս հատուկ կենտրոնանալ հաղորդակցական հմտությունների զարգացման վրա, այսինքն ` լեզուն ինքնաբերաբար օգտագործելու ունակության վրա: Նախընտրելի է, որ թեմաները առնչվեն կյանքի այն հիմնական ոլորտներին, որոնք բոլորին հետաքրքրում են (Էկոլոգիա, քաղաքականություն, երաժշտություն, կրթություն և այլն): Ի տարբերություն աուդիալեզու և կրկնության և մտապահելու վրա հիմնված այլ մեթոդների, երկխոսության մեթոդը

սահմանում է վարժություններ «բաց ավարտով». Ուսանողներն իրենք չգիտեն, թե դասարանում իրենց գործունեությունն ինչի կհանգեցնի, ամեն ինչ կախված կլինի արձագանքներից և պատասխաններից: Ամեն օր օգտագործվում են նոր իրավիճակներ: Այսպես է պահպանվում աշակերտների հետաքրքրությունը դասերի նկատմամբ. Ի վերջո, բոլորը ցանկանում են իմաստալից շփվել իմաստալից թեմաների շուրջ: Դիտարկենք հաղորդակցումը դիալոգների միջոցով –խմբային աշխատանքի օրինակ
Ուսուցիչը նախապես պատրաստում է երկխոսության թեմաներ հաշվի առնելով

14

- 1) տեղեկության հաղորդողը և ընդունողը (ո՞վ - ո՞ւմ)-մասնակիցների դերերը
- 2) շփման բնույթը (պաշտոնական, ընկերական, մտերմական, չեզոք)
- 3) խոսքի առարկան-թեման
- 4) նպատակը
- 5) հաղորդակցման պայմանները`

ա) տեղը-միջավայրը

բ) ժամանակը (առավոտյան, երեկոյան, ամառ, ձմեռ)

8) ազգային առանձնահատկություններ:

9) Ուսուցիչը հիմնականում քննարկման է ներկայացնում թեմաներ, որոնց աշակերտները լավ ծանոթ են իրենց մայրենի լեզվով, տարբեր բնագավառներից:

10) Ձևավորում է տարբեր խմբեր` 2 սվորող, 4 սվորող, 6 սվորող

11) Բաժանվում է թեմաները ըստ խմբերի մասնակիցների քանակի առկայության

12) Խմբերին տրվում է ժամանակ ծանոթանալ թեմային, և շատ արագ մտածել երկխոսության նպատակի մասին:

13 Չերթականությամբ լսել բոլոր խմբերին, թույլ տալ, որ հնարավորինս շատ խոսեն, և խրախուսել:

15

| | |
|---|---|
| <p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p> | <p>Աստվածատրյան, ֆրանսերենի չափորոշիչ 2009, էջ 7-9 Ա. Արշակյան, երկխոսության կարողությունների ձևավորման մեթոդիկա ֆրանսերենի նյութի հիման վրա 2009, էջ 36-40 Վեբինար</p> |
| | |
| <p>Օգտագործված մեթոդները, գործիքները</p> | <p>Ունկնդրումներ, ֆիլմերի դիտում</p> |
| | |
| <p>Իրականացման ժամանակահատվածը</p> | <p>05.09- 16.09. 2022</p> |
| | |
| <p>Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p> | <p>10-11րդ դաս. աշակերտներ 70/41 (աղջիկները գերակշռում են)</p> |
| | |

Եզրակացություններ, առաջարկություններ

Չափի առնելով վերը նշված փաստերը և տարբեր մեթոդների առանձնահատկությունները՝ մենք հանգեցինք այն

եզրակացության, որ մեթոդների ժողովրդականության վարկանիշի առաջին գիծը ակտիվորեն պահվում է հաղորդակցական մոտեցմամբ, որը, ինչպես իր անունն է ենթադրում, ուղղված է հաղորդակցման պրակտիկային: Հաղորդակցման տեխնիկան ուղղված է հենց հաղորդակցության հնարավորությանը՝ տարբեր մոտեցումներով, որոնցից առավել արդյունավետն է դիալոգային մոտեցումը:

Ինչպես համոզվեցինք դիալոգային մոտեցումը իրականում հնարավորություն է տալիս շփվել տարբեր իրավիճակներում և տարբեր մարդկանց հետ, արտահայտվել բաց հարցադրումներով, արժեվորել և գնահատել թե ինքդ քեզ, թե ընկերներիդ, անկաշկանդ արտահայտվել:

Ֆրանսերենում ուսուցման հաղորդակցական մեթոդը առավելագույնս համապատասխանում է ժամանակակից աշխարհում մարդու կարիքներին և պահանջներին: Լեզուն հաղորդակցական մեթոդաբանության մեջ համարվում է որպես կապի միջոց, ուստի կապի գործընթացն ինքնին համարվում է լեզու սովորելու լավագույն միջոցը: Ուսուցման նպատակն է սովորել, թե ինչպես օգտագործել լեզուն որպես սեփական մտքերն ու մտադրությունները արտահայտելու միջոց և փոխանակել դրանք տարբեր իրավիճակներում՝ հաղորդակցության մյուս մասնակիցների հետ շփման գործընթացում:

Այսպիսով՝ հաղորդակցական մեթոդի և նրա դիալոգային մոտեցման կիրառումն է, որ իրական է դարձնում լեզվի անմիջական օգտագործումը դասապրոցեսում, քանզի այսա մոտեցումը օտար լեզուների ուսուցման բազմաթիվ մեթոդների ներդաշնակ համադրություն է՝ հավանաբար, լինելով տարբեր կրթական մեթոդների էվոլյուցիոն բուրգի գագաթին:Դ

Այսպիսով, քանի որ հետազոտության նպատակն էր շեշտադրել ֆրանսերեն լեզվի դասաժամին սովորողի ինքնուրույնությանը խթանելու եղանակներն ու մեթոդները, հաղորդակցական մոտեցման առանձնահատկությունները, և վեր հանել ու ներկայացնել դիալոգների միջոցով հաղորդակցման կազմակերպման արդյունավետությունը՝ համեմատելով այն լեզվի ուսուցման այլ մեթոդների հետ, մենք ունեցանք հետևյալ արդյունքը՝ հաղորդակցական ուսուցման մեթոդի դիալոգային

մոտեցման օգտագործումը

✓ **Վերացնում է լեզվական խոչընդոտը**

✓ **Քերականությունը յուրացվում է լեզվով հաղորդակցման գործընթացում.**

✓ **Սովորողը նախ մտապահում է բառերը, արտահայտությունները, լեզվական բանաձևերը և միայն դրանից հետո սկսում է հասկանալ, թե դրանք որոնք են քերականական իմաստով:**

✓ **Դասի բազմազանություն**

✓ **Անկախ և անկաշկանդ խոսք**

✓ **Մտքերի փոխանակում և քննարկում տարբեր թեմաների շուրջ**

Աներկբա է, որ այս հետազոտության ընթացքում ձեռք բերած գիտելիքները հետայսու արդյունավետ կերպով կկիրառենք մեր մանկավարժական գործունեության ընթացքում՝ նպատակ ունենալով \$րանսերեն լեզվի դասերին սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն և նախաձեռնողականություն, սովորեցնել \$րանսերեն լեզվով խոսել և հաղորդակցվել ինքնուրույն, անկաշկանդ,ստեղծագործաբար և ոչ միայն սահուն, այլև ճիշտ:

| | |
|--|--|
| Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին | Դիալոգների վարումը նպաստում է \$րանսերենով աշակերտների սեփական մտքերն արտահայտելուն և փոխանակելուն 10-11րդ դասարաններում |
| | |
| Այլ տեղեկատվություն | |

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Այտընյան, Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 34
2. Բաղդասարյան Յ. (2015), Հաղորդակցական մեթոդի դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» Երևան, ԵՊՀ հրատ., N 1 (18)
3. Крысин Л. П. Речевое общение и социальные роли говорящих. М., 1976, с. 44.
4. Lozanov G. (1979). Suggestology and outlines of suggestopedy. NY, Gordon Beach,
5. Abadía M. P. (2004). De los programas nocional-funcionales a la enseñanza comunicativa // J. Sánchez e I. Santos (eds.), Vademécum para la formación de profesores. Enseñar español como segunda lengua (L2) / lengua extranjera (LE), Madrid, SGEL.
6. Asher J. (1977). Children learning another language: A developmental hypothesis, Child Development, vol. 48, No. 3, Ann Arbor, Wiley, SRCD.
7. Kelly L.G. (1969). Centuries of Language Teaching. NY, Newbury House Publishers
8. 2. Sánchez A. (1997). Los métodos en la enseñanza de idiomas. Madrid, Sociedad General Española de Librería S. A.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)

- Նկարներ
- Արդյունքներ